ՀԱՅՐԵՆԻՔ

ԳԱԶՄԱՆԴ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԿԱՆԽԻՒ

Տարեկան Վեցամսեայ

Կ·Պոլսոյ համար 6 մէճիտ 3 մէճ·

Գաւառաց » 7 » 3½ »

Direction du journal arménien
ՀԱՅՐԵՆԻՔ· CONSTANTINOPLE
Mérdjan Ruchdi éfféndi Han No-19

10 ՓԱՐԱՅ

ՕՐԱԳԻՐ

10 ՓԱՐԱՅ

ԳԱԶՄԱՆԴ

ՀԱՅՐԵՆԻՔի վերաբերեալ որ եւ է նամակ եւ գրութիւն պիտի ուղղուի առ տնօրէն-խմբագիր Կ· Պոլիս Մէրճան չարշը Բիւշաի էճ· խան երկրորդ յարկ թիւ 19·

Gérant-Responsable
M. MELIKIAN

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱԶԴ· — երեք օր ետքը փնտռուած «Հայրենիք»ի իւրաքանչիւր թիվը յետ այսօրիկ 20 փարայի պիտի վաճառուի·

ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ—ԹԻՒ 2314 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 23 ՅՈՒՆԻՍ 1887 (Ն·Տ·) 5 ՅՈՒԼԻՍ

ՆԱՄԱԿ ՌՈՒՍԻԱՑԷՆ

—

Թիֆլիս, 1887 մայիս 19

· · · Խմբագիր

Շատ անգամ թէ մտածած եւ թէ լսած–կարդացած մէջ կարելի է նկատել, որ արեւելեան արեւմտեան հայերը չեն հետաքրքրուիր միմեանց կեանքով, չեն ուսումնասիրուիր, միմեանց··· այդպէս է երեւում առ երեւոյթն·— մեր ինտելիգենտի մեծ մասը, որ կրթուած է ռուսական բարձրագոյն ուսումնարաններում, մեծ մասամբ խորթացած են լինում հասարակութիւնից, թէ նա պէտք է ռուսական համալսարանները դեղերիկ խորհրդածութիւններով, մինչեւ անգամ հարենասիրական զգացումներով, բայց վերադառնում է բոլորովին փոխուած· նրա նախկին իդէալները տեղի են տուել անբնական միտումներին, չահերին··· Եւ մեր ներկայ ինտելիգենցիայի դասակարգը չահասէր է, փողասէր՝ որի աղբիւրութեան տակ կրթուում է ապագայ սերունդը··· Բայց դրա հակառակ կան եւ մի կարգ անձեր, որոնք ոչ վառ երեւակայութիւններով եւ օգային ամբոյներով բարձրագոյն ուսումնարանները են եւ ահա դրանց էլ իսկապէս պէտք է համարել հասարակութեան մէջ օգտակար մարդիկ, նոր եւ լարի ձգտումների տարածողները, ժողովրդի յառաջդիմութեան նպաստողները· Դրանք, այդ միջնակարգ ուսումնարանները, մեծամեծ պահանջներ չունին եւ ոչ էլ շատ հեռուսը ու բարձր ձգտումներ եւ դրա համար էլ անհամեմատ աւելի օգտակար են հասարակութեան համար՝ քան բարձրագոյն ուսումնարանները·

Ահա հէնց այդ դասակարգի անձերից են, որ վոքրիկ բայց հաստատ քայլերով, ժրաջան միջնորդների նման ամէն մէկը իր բոլորի չափ աշխատում է իր սահմանափակ շրջանում· Ահա ատում եմ, այդ դասակարգի անձերն են, որ էլի փչ թէ շատ հետաքրքրւում են ժողովրդի վիճակով, ուսումնասիրում են նրա դրութիւնը···

Էլի այդ դասակարգի անձերն են, որոնց աւելի հետաքրքրում է իրենց մտածած թէ հետաքրքրող ազգակիցների վիճակը· Նրանք են, որ բոլոր հայերի վերայ նայում են իրրեւ մի ընտանիքի ցրուած անդամների վերայ եւ նրանց սրտին մօտ է դրանց վիճակը· Բայց շատ անգամ նրանք, որքան բարի էլ ցանկութիւն ունենային հետաքրքրուելու այդ ամենով—անկարող են իրենց դադարը լրացնել· Նիւթական վիճակը նրանց չի նպաստում որ կարողանան ձեռք բերել կարեւոր գրքերն եւ պարբերական թերթերն ու հանդէսները, իսկ ամբողջ Ռուսիայում էլ կարող չէք գտնել մի գրադարան, մի ընթերցարան, մի ուսումնարանական հաստատութիւն, որ դէթ կարեւոր նիւթերը ունենար բոլոր հայերի համ դէթ որոնց կարելի է, վիճակը ուսումնասիրելու համար· Այսպէս օրինակ, լ'նչ ուզում են թող ասեն, բայց ճշմարիտ է որ «բոլոր հայերիս ձգտումները այսօր ուղղուած են, դէպ ի թիւրքիացի հայերը, որոնք աւելի ապահով կեանք վարելով կրօնի, լեզուի եւ ազգայնութեան պահպանութեան վերաբերմամբ եւ աւելի մեծ քանակութեամբ կեդրոնացած լինելով, իրաւամբ արժանի են այդ համակրութեան, այդ ուշադրութեան»· Բայց միեւնոյն ժամանակներն ո՞վ է այդ մասին մտածել, ո՞վ է մի քայլ արել· — միայն պատահական թղթակիցներով են բաւականանում մեր թերթերը· օրինակ Թուրքիայում ո՞ր թերթը ունի իւր սեղհական թղթակիցը, մի անկողմնապահ, անաչառ թղթակից, որ իւր կոչումը հասկանալով, հասարակութեան չիերակրեր անհամ անհոտ ղրախօսութիւններով, ցնորական վէպերով, այլ աշխատասէր ժողովրդի կեանքի հետ ծանօթացնել թիւրքահայերին··· կամ ո՞ր առաջնորդը, թեմակալը, բարձր եկեղեցական աստիճանաւորը ըստանում Ռուսիայի թերթերը· — կարծես ռուսահայերի կեանքը նրանց չհետաքրքրէր··· ո՞ր ձեր ժողովրդական կեանքը ուսումնասիրողը, դրապետը, իւր ձեռի տակ ունի՞ ռուսահայերի կեանքը պատկերացնող կարեւոր աղբիւրները··· Ա՛յս ամենը ցաւալի է ի հարկէ, բայց ճշմարտութիւն է· Միեւնոյն բանը պէտք է ասել եւ մեզ ռուսահայերի մասին թիւրքահայերի վերաբերմամբ եւ դուցէ մի բան էլ աւելի· ոբովհետեւ, մենք սովոր ենք պարծենալու, թէ աւելի դրական պիտութիւն, կրթութիւն ունինք, մեր զարգացումը աւելի բազմակողմանի է, իբրեւ եւ հաստատ հիմքի վերայ··· բայց··· բայց ո՞ր է դա, ինչո՞ւ ենք ցոյց տուել մեր այդ բազմակողմանի պարզ ացումը····

Ա՛յսպէսով մենք նոյն կարծես նոյն տառն անտարբերութեան մէջ ենք գտնւում դէպի թիւրքահայերը· Բայց դա մասամբ միայն ճշմարիտ է· եւ այդ իսկ վերեւում ասած խօսքերին կարելի էր եզրակացնել·

Յարգելի խմբագիր, ներեցէք եթէ նամակն երկարեցի· փոխանակ ուղղակի խնդրելն դիմելու, նախաբանով սկսայ իմ նամակը·

Ես մի երիտասարդ եմ, որ բոլոր բարի ձգտումները ունիմ իմ ազգին օգտակար լինելու համար· Եւ ուզում եմ ուսումնասիրել հայի վիճակը, դրութիւնը եւ նոյն աղբիւրից եմ չուր կամենում եմ խմել,— եւ ուզում եմ սատնել «Հայրենիք»ը···· Բայց ես այնքան միջոց չունիմ, որ ձեր վոզը միանգամին վճարեմ, ուստի, յարգոյ պարոն, արդիօք չէ՞ք ընդունիլ մի պայման· Ես խոստանում եմ ձեզ թղթակցել (օրինակ 15 օրը մի անգամ) կանոնաւորապէս, եւ ձեր թերթի համար պատրաստել ռուսահայերի կեանքին պատկերներ՝ դէպքեր·

—

Մակայն կասկածելիքսը ամենադաղտնի կերպով պատրաստել է բազմաթիւ օրհնութեան կոնդակներ, որով Հայ հասարակութիւնը հրաւիրւում է, իւր առատ նուէրներով նպաստել էջմիածնի վերաշինութեան· Թէեւ մեր փափաքն է, որ մեր Մայր-Սիօնը փառաւոր դիրք ունենայ, ինչպէս մտաւորապէս՝ նոյնպէս եւ արտաքուստ, բայց կասկածում ենք գործի յաջողութեան վերայ· Աւելի ժողովրդականութիւն, աւելի աղքեցութիւն է պէտք այդպիսի մեծ գործի ձեռնարկելու համար·

Մ· Մ·

—

Թիֆլիս, 1 յունիս

Ահա արդէն շոգեկառքը սկսան եւ ամէն տեղ ուսումնարաններում պարապմունքներին վերջ է տրւում· սկսուել են քննութիւնները, բայց դեռ կարելի չէ ասել, թէ ինչ հետեւանք են ունեցել, ինչ յարմարութիւններ եւ անյարմարութիւններ են ունեցել «տէօրիտիկապէս» կազմուած ծրագրերները գործնականի մէջ· Սակայն, առանց նախապատարամանի կարելի է ասել, որ յետեւանքները լաւ չպիտի լինին··· Ուսումնարաններին մասին ուրիշ անգամին պիտի գրեմ·

Ամառուայ շոգեկառքը սկսում են թէ չէ, ամէն ոք աշխատում է պարապմունքներից ազատուել, մի փոքր հանգստանալ, բայց բոլորովին դրա հակառակն է դիւզացու դրութիւնը, նա ամբողջ ձըմեռը հանգստանում է եւ միայն ամառն է գործի սկսում· Ահա տարի թէեւ ութերը ուշ սկսան, բայց դա արդեօք չեղաւ, որ խոտհարը ճանապարհ չատ տեղեր արդէն մինչեւ անգամ գարին հնձել են, ինչպէս է օրինակ Ծալկանում կողմերը· Ահա տարուայ հունձի մասին պէտք է ասել, որ ամէն կողմերից էլ ուրախութեան ազդակներ են լսւում, այնպէս որ, լոյս կայ, թէ չինականը այս տարի գոնէ կկարողանայ իւր պետական «ծառը» հարկերը վճարելուց յետոյ, մնացած պարտքերի «մի մասն» էլ տալ· Բայց դիւզացին այդ ուրախութեան միջից մի ինչ որ արտասուքի կաթիլներ են երեւում եւ այդ արտասուքը նրա ուրախական զգացմունքների արտայայտիչ, կամ դառնացեալ սրտի ախուվիչ արտասուքը չէ, այլ խոբելի վշտի որ ահագին ծանրութեամբ նստած է նրա կեանքի, սրտի, խղճի վրայ···· դիւզացին զգում է կարծես որ բնութեան խոստումը լոկ խոստում պիտի մնայ, որովհետեւ երկնային պա-

ՅԱՅՈՑ ՎԻՎԱՅ

Ս. Մ.

Յուրաքանչյուր ազգ ունի իր վիպական հերոսները, որոնք ժողովրդի ստեղծագործական երևակայության արգասիքն են, ժողովրդի ոգու մարմնացումը։ Ամեն ազգ ունի իր վիպական հերոսները, որոնք

պիտի ամուսնանայ։ Հարկ եղած պայմանագիրն նախընթաց երեկուն պիտի կնքուէր, որով խոշոր բաղդատութիւնը Պ. Քուրթ վաստակաւոր անձնուէր է։

Սըր Սալար Ճունկ քանի հինգ-ամեայ ուսեալ և բարեկիրթ երիտասարդ մ'է և ցարդ չէ ամուսնացած։ Տարեկան 120000 անգլ. ոսկւոյ եկամուտ ունենալէ զատ, անգլիական կառավարութենէն ալ տարեկան 9000 ոսկւոյ թոշակ մը կ'ստանայ։

—Երէկ ժամը 9ին միջոցները, ռուսական ընկերութեան Տիէր անուն չոգենաւն Թայան երթալու համար մայրաքաղաքիս նաւահանգստէն մեկնելու ատեն, աւստրիական Լոյտի ընկերութեան Բրոկիաս անուն չոգենաւին վրայ խնդալով, մաղունա մը ընկերոջմէ և չոգենաւուն ալ քիչ մը վեռաւեց։

— Ոտիկանութիւնը նախընթաց օրը Գատրդիւղի մէջ ատեն մը կռիւներով, քանի մը դրամանենգը ձերբակալեց, ինչպէս նաեւ քանի մը կեղծ դրամներ եւ անոնց վերաբերեալ գործիքները գրաւեց։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կը լսենք թէ Գատը-Գիւղի մէջ կրկնամսեանութեան դպրոցական դէպք մը տեղի ունեցեր է անցեալ շաբթու։ Բարձր դասակարգի վերաբերեալ անձ մը, որ ժամանակէ մը ի վեր իւր օրինաւոր կնոջմէն բաժանեալ է եղեր, այժմ պակուեր է որբ եւ այրի կնոջ մը հետ։ Այս ապօրինաւոր ամուսնութեան վրայ կը յուսանք թէ Պատրիարքարանն ուշադրութիւն կը դարձնէ, եւ հասարակաց դպրոցները բառնալու համար օրինական անօրինութիւնն ի գործ կը դնէ։

Այս ապօրինաւոր ամուսնութեան նկատմամբ հետաքրքրական տեղեկութիւններ ստացած ենք, զորս պիտի հրատարակենք առաջիկայ առթիւ։

Սամաթիոյ Ս. Սահակեան Ասնուց ընկերութիւնն, որոյ նպատակն է իւր թաղին երկաթե վարժարանաց նպաստել նուիրատուութեան աշխատիլ, իւր վերահաստատութեան 19 րդ՝ Տարեշրջանի առթիւ այս տարի եւս, ըստ սովորութեան մի դաչտային հանդէս պիտի կատարէ Ցունիս 28/10 Ցուլիսի կիւրակէ օրն ի պարտիզն Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցի։

Սոյն հանդէսն կարի վայելուչ եւ չքեղ կերպով տօնելու համար յատուկ կարգադիր մասնախումբ մը կազմուած է, որ այժմէն սկսած է ամէն ջանք եւ աշխատութիւն ի գործ դնել պատուարժան հանդիսականներն ըստ ամենայնի գոհացնելու համար. Հանդիսիս մասնամասնութիւնք յատուկ յայտարարութեամբ պիտի ծանուցանեն արդոյ հասարակութեան։

Ուստի կը սիրեմք յուսալ որ ամեն կրթասէր ազգային սիրով պիտի յօժարի իւր ներկայութեամբը պատուել սոյն հանդէսն եւ այսպէս նպաստել ընկերութեանս կրթական ջանից։

Ի դիմաց տնօրէն խորհրդոյ
Ս. Սահ. Ասնուց ընկ.
Ատենադպիր Ատենապետ
Ա. ԱՒՏԱՐԵԱՆ Մ. ԱՆՏՕՆԵԱՆ
18/30 յունիս 1887
Սամաթիա

ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

Հաստատութեան

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆԻ

Հանդէսն, ըստ կանխագոյն ծանուցման, պիտի կատարուի յառաջիկայ յունիս 28 կիւրակի օր։

Շերքէթի Մայրիէյի 21 թիւ չոգենաւն նոյն առաւօտ ճիշտ ժամը 12 ին պիտի մեկնի կամուրջէն եւ հետզհետէ հանդիպելով Քասըքէօյ, Պէշիքթաչ, Գուզկունճուք, Օրթաքէօյ, Գուրուչէշմէ, Րումելի Հիսար, Պոյաճը քէօյ եւ Եէնիքէօյ պիտի երթայ ուղղակի Եէնի մահալլէ, ուսկից հանդիսականք պիտի առաջնորդուին մերձակայ Թահիր աղայի գեղեցիկ պարտէզն, որ սահմանուած է իրրեւ հանդիսավայր։

Կէս օրին ճաշ պիտի տրուի առաւել քան երեք հարիւր հանդիսականաց. բոլոր օրը նուագածուաց ընտիր խումբ մը պիտի նուագէ թէ չոգենաւին մէջ եւ թէ հանդիսավայրն։

Երեկոյին չոգենաւը պիտի մեկնի Մէզար պուրնուէն ժամը 10 1/2 ին, եւ վերադիմել նաւամատոյցները հանդիսպելէ ետեւ պիտի իջնէ կամուրջ։

Երթեւեկի եւ ճաշի համար տոմսի գինն է Մէկ Մէճիտ։

Նոքա որ կը փափաքին մասնակցիլ սոյն կրթական հանդիսին, առանձինն կամ հանդերձ ընտանեօքն կը հրաւիրուին տոմս մասնակցութեան տոմսն. պահել գարեւ սուճի Պօղոս եւ Յակոբ աղաներէս, Քասըքէօյ նաւամատոյցի Զբօսարանն՝ Մ. Մխիէլէն, Պէշիքթաչ նաւամատոյցի զբօսարանն Մարտիկ աղայէն, Օրթաքէօյ Թալամճառ Մնացական աղայէն, եւ ի ձեռն կարգադիր մասնախմբի անդամոց։

Ի դիմաց մասնախմբին
Ատենապետ
Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
Հաշուակալ Գանձապետ
Ա. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Տ. ՔԼԷԿԵԱՆ

ԴՐԱՄԱԿԱՆ

—

ՕՍՄ. ԿՕՆՍՕԼԻՏԻ

Երէկ երեկոյ գոց	16	1
Այս առաւօտ բաց	16	2

ԻՍԹԻԳՐԱՁԸ ՏԱՆԻԼԻՑԻ

Այս առաւօտ	Դ.Կ. 38	20

—

ԲԱՃԵՆԵՏՄՄԲ

Թրամուէյ	դրչ. 297	—
Րումէլիի երկաթուղի	ֆր. 33	50

—o—

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

Օսմանեան ոսկի	դրչ. 100	—
20 Ֆրանքնոց	» 88	16
Անգլիական ոսկի	» 110	38
Բօլ Իմբէրիալ	» 90	18
Քրիմից	» 51	20
Րուպլի թղթադրամ	» 10	2
» արծաթ	» 75	—
Ֆիօրին	» —	—
Մէճիտ արծ (տարբ.)	» 108	16
Վեցնոց	» 102	35
Հինգնոց	» 102	35
Մէճալիք	» 98	10
Քառորդ	» 107	—
Մանր մէճիտ	» 104	15
Թասֆիյէ	» 17	

«ՓՈՐՁԵԼ ԵՒ ՀԱՄՈԶՈՒԻԼ»

ԹՂԹԱՎԱՃԱՌ ԵՒ ԳՐԱՎԱՃԱՌ

Վ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ԵՒ ԵՂԲԱՐՔ

Իրենց վաճառատան մէջ Զաքմաքճըլար եօղուշ սաքա չէշմէսի վերի կողմը Թիւ 51. խիստ շափաւոր գներով յամախորդաց կը վաճառեն ամեն տեսակ վաճառականական եւ դպրոցական պիտոյքներ։ Գաւառական յանձնարարութիւնք փութով եւ խնամով կը կատարին։ Շատ գնողաց գոհացուցիչ զեղչ։ Այցետոմս (քարթ վիզիթ), նամակագրութեան փոխանակադիր եւայլն կը տպուին։ Վիճակագրութեան վերաբերեալ յանձնարարութիւնք եւս կ'ընդունուին, յամախորդք բոլորովին գոհ պիտի լինին վաճառատանս ընթացքէն։

յի տեսարանաց յուզման վերջապէս, ոտք ելաւ առաւել ուժգոյն քան երբէք և այս անդամ իրական պլխոս ցաւով մը։

Իւր մայրն և հայրն նշմարեցին նորա անհանդըստութիւնը և այս հարցումն բազմիցս կրկնուեցաւ։ «Ի՞նչ ունիս, Մարի, հիւանդ չե՞ս, Մարի» Օրիորդն ջանաց զանոնք հանդարտեցնել և երեւիլ նոցա առջեւ զուարթադէմ, բայց չը յաջողեցաւ։

Երեկոյն մերձեցաւ։ Վերջին անգամ լինելով իւր ընտանեաց ծոցէն հեռանալու դաղափարը կը խոցոտէր սիրտն։ Հաղիւ կ'ապրէր եւ ցած ձայնիւ կուզէր իւր «մնայք բարեաւն» այն ամէն անձանց և առարկայից որք ղինքը կը շրջապատէին հայրենի տանը մէջ։ Ձայը պատրաստ էր. կուրծքն վիրաւորուելու չափ սիրան կը բաբախէր. դողդոջուն ձայնիւ մը յայտնեց իւր անօթի չը լինելը եւ նեղսրտութիւն խնդրեց իւր ծնողքէն որք սովորականին պէս համբուրեցին և օրհնեցին իրենց դուստրը։

Օրիորդը մեծ դժուարութիւն կրեց զսպելու իւր արտասուքները։

Սենեակն մտնելով, թիկնաթոռի մը մէջ նետուեցաւ և սկսաւ արտասուել։

Իւր սենեկապան կինը ջանաց զինքը հանդարտեցնել, ամենայն ինչ պատրաստ էր. Մարի կէս ժամէն առ յաւէտ պիտի բաժնուէր հայրական դարաստանէն լքանելով իւր յոյժ սիրեցեալ սենեակը և իւր կուսական խաղաղասէր կեանքը։

Մարի կապրիէլօվնա լաւ դաստիարակութիւն մ'առած էր և չափազանց կը սիրէր վիպասանութիւնները։ Իւր սիրոյ առարկայն խեղճ պաշտօնակալ մ'էր որ նոյն պահուն արձակուրդի պատճառաւ գիւղին մէջ կը դտնուէր։

Հարկ է ըսել թէ երիտասարդն ևս կը տառապէր միեւնոյն բոցովն, և թէ Մարիի ծնողք հըշմարտած լինելով սոյն փոխադարձ սէր, արգիլած էին մանկամարդ օրիորդին երբէք չմտածելու անոր վրայ, այլ արգելքն յետոյ, նկատեցին դայն իբրեւ մի սոսկին էակ։

Մեր սիրահարք իրարու հետ կը թղթակցէին, և ամեն օր իրարու այցելութիւններ կատարէին կամ նօճինելու անտառակին մէջ և կամ հինօրեայ մատրան մերձակայքը։ Հոն իրարու խոստացած էին յաւիտենական սէր, բաղդին դէմ ապըստամբած էին և իրարու բոլորովին հակառակ խորհուրդներ յղացած էին, և այսպէս յաճախ խօսակցելով, հասած էին,—ինչ որ կարի բնական է—սա՛ վերջին որոշման։

—Եթէ երբէք չկարենանք ապրիլ առանց միմեանց, և եթէ մեր դաժան ծնողաց կամքն չարունակեց լինել խոչընդոտ մը ընդդէմ մեր երջանկութեան մը, յայնժամ պիտի սակրաւունք մը ջոց մը դտնել մեր փափաքն ի դործ դնելու համար։

Բացայայտ է թէ՝ երիտասարդն եղաւ առաջին անդամ այս բարեյաջող դաղափարը յղացողն, ուս

Ա՛մ ոչ ոք ունի ավելի մեծ սեր քան այն, որ մարդ իր կյանքը դնի իր բարեկամների համար։

Դուք իմ բարեկամներն եք, եթե այն ինչ որ պատվիրում եմ ձեզ՝ կատարեք։

Ես ձեզ այլևս ծառաներ չեմ կոչում, որովհետև ծառան չգիտե թե ինչ է անում իր տերը։ Ես ձեզ կոչեցի բարեկամներ, որովհետև ինչ որ լսեցի իմ Հորից՝ ձեզ հայտնեցի։

Դուք ինձ չընտրեցիք, այլ ես ընտրեցի ձեզ և կարգեցի ձեզ, որ գնաք և պտուղ բերեք, և ձեր պտուղը մնայուն լինի, որպեսզի ինչ որ խնդրեք Հորից իմ անունով՝ նա տա ձեզ։

Ես ձեզ պատվիրում եմ այս, որ սիրեք միմյանց։

Եթե աշխարհը ատում է ձեզ՝ գիտցեք, որ ինձ ավելի քան ձեզ ատեց։

Եթե աշխարհից լինեիք՝ աշխարհը կսիրեր իր նմանը, բայց որովհետև աշխարհից չեք, այլ ես ընտրեցի ձեզ աշխարհից, ուստի աշխարհը ատում է ձեզ։

Հիշեցեք ինձ ասած խոսքը, թե՝ ծառան չէ մեծ իր տիրոջից։ Եթե ինձ հալածեցին, ձեզ ևս պիտի հալածեն։ Եթե իմ խոսքը պահեցին, ձերը ևս պիտի պահեն։

Բայց այս ամենը պիտի անեն ձեզ իմ անունիս համար, որովհետև չեն ճանաչում նրան, որ ինձ ուղարկեց։

Եթե ես չգայի և նրանց չխոսեի, մեղք չէին ունենա, բայց հիմա իրենց մեղքի համար պատրվակ չունեն։

Ով ատում է ինձ՝ ատում է և իմ Հորը։

Եթե ես նրանց մեջ չգործեի այնպիսի գործեր, որ ուրիշ ոչ ոք չի գործել, մեղք չէին ունենա, բայց հիմա տեսան և ատեցին և՛ ինձ և՛ իմ Հորը։

Բայց այս եղավ, որպեսզի կատարվի նրանց Օրենքում գրված խոսքը, թե՝ անպատճառ ատեցին ինձ։

Երբ գա Մխիթարիչը, որին ես ձեզ պիտի ուղարկեմ Հորից, Ճշմարտության Հոգին, որ Հորից է գալիս, նա կվկայի ինձ մասին։

Դուք ևս վկայություն պիտի տաք, որովհետև սկզբից ինձ հետ եք եղել։

Այս ամենը ձեզ ասացի, որ չգայթակղվեք։

Ժողովարանից պիտի հանեն ձեզ, ավելին՝ գալիս է ժամանակ, երբ ով որ սպանի ձեզ, կկարծի, թե Աստծուն ծառայություն է մատուցում։

Եվ այս ամենը պիտի անեն ձեզ, որովհետև չեն ճանաչում ոչ Հորը և ոչ ինձ։

Բայց ես ձեզ ասացի այս, որ երբ գա նրանց ժամը, հիշեք, որ ես ձեզ ասացի։

Ես սկզբից ձեզ հետ չխոսեցի այս, որովհետև ես ձեզ հետ էի։

Բայց հիմա գնում եմ ինձ ուղարկողի մոտ, և ձեզանից ոչ ոք չի հարցնում ինձ՝ ո՞ւր ես գնում։

Այլ որովհետև ես այս ասացի ձեզ, տրտմությունը սիրտ լցրեց ձեզ։

Բայց ես ճշմարտությունն եմ ասում ձեզ, ձեզ համար օգտակար է, որ ես գնամ, որովհետև եթե չգնամ՝ Մխիթարիչը չի գա ձեզ մոտ, իսկ եթե գնամ՝ կուղարկեմ նրան ձեզ մոտ։

Եվ նա գալով՝ կդատապարտի աշխարհը մեղքի, արդարության և դատաստանի համար։

Մեղքի համար, որովհետև չեն հավատում ինձ։

Արդարության համար, որովհետև ես գնում եմ իմ Հոր մոտ, և դուք այլևս ինձ չեք տեսնի։

Դատաստանի համար, որովհետև այս աշխարհի իշխանը դատապարտված է։

Ես դեռ շատ բաներ ունեմ ձեզ ասելու, բայց հիմա չեք կարող տանել։

Երբ նա՝ Ճշմարտության Հոգին գա, նա ձեզ կառաջնորդի ամբողջ ճշմարտության մեջ, որովհետև նա իր կողմից չի խոսելու, այլ ինչ որ լսի՝ կխոսի, և գալիք բաները կհայտնի ձեզ։

Նա ինձ կփառավորի, որովհետև իմից կառնի և ձեզ կհայտնի։

Ամեն ինչ որ Հայրն ունի՝ իմն է, ուստի ասացի, որ իմից կառնի և ձեզ կհայտնի։

Մի քիչ հետո՝ ինձ այլևս չեք տեսնի, և դարձյալ մի քիչ հետո՝ ինձ կտեսնեք, որովհետև ես գնում եմ Հոր մոտ։

Ուստի ասացին նրա աշակերտներից մի քանիսը իրար՝ ի՞նչ է սա, որ մեզ ասում է, թե՝ մի քիչ հետո՝ ինձ չեք տեսնի, և դարձյալ մի քիչ հետո՝ ինձ կտեսնեք, և թե՝ որովհետև ես գնում եմ Հոր մոտ։

Ուստի ասում էին՝ ի՞նչ է սա, որ ասում է՝ մի քիչ հետո, չենք հասկանում թե ինչ է խոսում։

Հիսուս գիտեցավ, որ ուզում էին հարցնել իրեն, և ասաց նրանց՝ այդ մասին իրար մեջ հարցնո՞ւմ եք, որ ասացի՝ մի քիչ հետո՝ ինձ չեք տեսնի, և դարձյալ մի քիչ հետո՝ ինձ կտեսնեք։

Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ դուք պիտի լացեք և ողբաք, բայց աշխարհը պիտի ուրախանա, դուք պիտի տրտմեք, բայց ձեր տրտմությունը պիտի ուրախության փոխվի։

Կինը, երբ ծնանելու է, տրտմություն ունի, որովհետև եկել է իր ժամը, բայց երբ մանուկը ծնավ՝ այլևս չի հիշում նեղությունը, ուրախ է, որ մարդ աշխարհ ծնավ։

Ուրեմն դուք ևս հիմա տրտմություն ունեք, բայց ես նորից պիտի տեսնեմ ձեզ, և ձեր սիրտը պիտի ուրախանա, և ձեր ուրախությունը ոչ ոք պիտի խլի ձեզանից։

Եվ այն օրը ինձանից ոչինչ պիտի չհարցնեք։

Ա՛մ ոչ ոք ունի ավելի մեծ սեր քան այն, որ մարդ իր կյանքը դնի իր բարեկամների համար։

Դուք իմ բարեկամներն եք, եթե այն ինչ որ պատվիրում եմ ձեզ՝ կատարեք։

Ես ձեզ այլևս ծառաներ չեմ կոչում, որովհետև ծառան չգիտե թե ինչ է անում իր տերը։

Ես ձեզ ասացի այս, որ իմ ուրախությունը ձեր մեջ մնա, և ձեր ուրախությունը լրիվ լինի։